ԴԱՐՁՅԱԼ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

1850-ական թվականներին թանզիմաթի քաղաքականության իրագործման համեմատ, զարգացման նոր շրջափուլ էր ապրում օսմանյան բարենորոգչական գաղափարախոսությունը՝ օսմանիզմը: Հաշվի առնելով զուտ քաղաքական բնույթի բարեփոխումների անհրաժեշտությունը Օսմանյան կայսրության պահպանման գործում, այս գաղափարախոսությունը ուղղվում էր կայսրության ժողովուրդների ազգային ինքնորոշման ձգտումների դեմ և դրան էր հակադրում «օսմանցիության»՝ բոլոր ազգություններին թուրքերի մեջ ձուլելու գաղափարը: Այն ուներ ծայրահեղ հետադիմական բնույթ և կոչված էր արգելակելու հպատակ այլակրոն ժողովուրդների ազգային ու քաղաքական առաջընթացը:

Օսմանյան ազատամտությունն իր հետագա ծավալման ազդակները ստանում էր ոչ միայն երկրի տնտեսական խորացող ճգնաժամից, այլև արտաքին քաղաքական իրավիճակի թելադրանքով: Եվրոպական երկրների արևելյան քաղաքականության մեջ առաջնահերթ նշանակություն ստացավ Օսմանյան կայսրության բարեփոխումների ծրագիրը՝ հատկապես Ղրիմի պատերազմից հետո: Այն խրախուսվում էր Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից, որոնք Թուրքիայի քայքայված հասարակական ու տնտեսական օրգանիզմը փորձում էին փրկել եվրոպական քաղաքակրթության ներարկումներով՝ ելնելով կայսրությանը և նրա շուրջ կազմավորված արտաքին քաղաքական ստատուս քվոն պահպանելու մտահոգությունից: Եվրոպական քաղաքագիտության տեսակետից Թուրքիայի ամբողջականության պահպանումը դառնալու էր Եվրոպայում խաղաղություն, տերությունների փոխհարաբերությունների մեջ հավասարակշռություն ապահովելու երաշխիք և գործուն միջոց՝ ընդդեմ Ռուսաստանի ռազմաքաղաքական ծավալապաշտության: «Եվրոպականացած» Թուրքիան, մյուս կողմից, պետք է մեղմեր հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարի մղումները և նրանց համոզեր տեղական ինքնավարությունների զարգացման առավելությունների մեջ, որին կարելի էր հասնել Թուրքիայի բարեփոխումների պայմաններում: Թուրքիայում բարեփոխումներ անցկացնելուն ուղղված եվրոպական քաղաքականությունը, այսպիսով, հակադրվում էր ոչ մահմեդական ժողովուրդների ազատագրական պայքարին և պատրանքներ էր սերմանում այդ երկրի քաղաքակրթվելու հնարավորությունների վերաբերյալ: Օսմանյան ազատամտությունը, իր հերթին, ձգտում էր կասեցնել ժողովուրդների ազատագրական պայքարն ու ազգային ինքնորոշման տրամադրությունների զարգացումը և այս

իմաստով նրա դիրքորոշումը համընկնում էր եվրոպական քաղաքականության ջանքերին:

Միլեթների վերակառուցման ուղղությամբ Բ. դռան ընդունած պարտավորություններին համապատասխան (1856 թ. հաթթը շերիֆով) 1856 թ. դեկտեմբերին Կ. Պոլսի հայերի նորընտիր Գերագույն ժողովը կազմեց հանձնաժողով՝ Ազգային վարչության կանոնադրություն մշակելու համար: 1857 թ. մարտի 22-ին հանձնաժողովը նախագիծը ներկայացրեց Ընդհանուր ժողովի քննարկմանը: Հ. Սրվաճյանի «Մեղու» հանդես եկավ ի պաշտպանություն կանոնադրության հաստատման, որ նա համարում էր հայ համայնքի աշխարհիկ ազատությունները հաստատելուն ուղղված կարևոր քայլ և առաջադրում էր ժողովրդավարական ընտրության պահանջներ[1]: Ընդհանուր ժողովը հաստատեց կանոնադրությունը, սակայն ամիրաներն ու բարձրաստիճան կղերը ամեն գնով փորձում էին կանխել դրա վավերացումը Բ. դռան կողմից: Վերջինս ևս, չնայած միլեթներում կրոնական մարմինների և պատրիարքների իշխանությունը թուլացնելու իր ուղղվածությանը, չհանդուրժեց աշխարհիկ վարչությանը տրված լայն իրավասությունները: Հիրավի, կանոնադրությունն առանց վավերացվելու վերադարձվեց հայ համայնքին, «պետության մեջ պետություն չկրնար ըլլալ» առարկությամբ[2]:

Չի կարելի բացառել նաև Բ. դռանը ներշնչած այն տագնապը, որի պատճառը հասարակական սուր ներհակություններն էին պոլսահայ համայնքում: Դեռևս 1847 թ., Մատթեոս պատրիարքի ժամանակ, Կ. Պոլսում հաստատվեցին Հոգևոր ժողով (կազմված 14 եկեղեցականից) և Գերագույն ժողով (20 աշխարհականից): Ժողովի կազմում էին ոչ միայն ամիրաներ ու վաճառականներ, այսինքն՝ համայնքի վերնախավի ներկայացուցիչներ, այլև արհեստավորներ: Անշուշտ, դա նշանակում էր, որ ամիրաներն իրենց իշխանությունը պետք է կիսեին արհամարհված էսնաֆի՝ արհեստավորության հետ: Սակայն առևտրաարհեստավորական խավերը, իրենց հերթին, մտադիր չէին տեղի տալ ամիրայական միահեծանության հին ժամանակները վերականգնելուն ձգտող պոլսահայ մեծահարուստների վարչական հավակնություններին: Ամիրայության և ժողովրդական խավերի ներկայացուցիչների խուլ կամ բացահայտ հակադրության ու պայքարի պայմաններում ազգային ժողովներում հայտնվում են նոր խավեր՝ Եվրոպայում կրթված երիտասարդ մտավորականությունը և մյուս կողմից՝ օսմանյան պաշտոնական ծառայության մեջ մտած պաշտոնեությունը՝ հայ էֆենդիական դասը: Եթե մտավորականությունը պետք է գլխավորեր առևտրաարհեստավորական խավերի հասարակական պայքարն ամիրայության և հետադիմական հոգևորականության դեմ՝ իրավական հունի մեջ դնելով այն, ապա էֆենդիական դասը կատարում էր երկակի դեր: Մի կողմից այդ դասը իրականացնում էր Բ. դռան հասարակական պատվերը ներհակություններով առլեցուն պոլսահայ համայնքում՝ գործելով ըստ նրա թելադրանքի, իսկ մյուս կողմից՝ բուն իսկ էությամբ լինելով պահպանողական, սատարում էր ամիրայությանն ընդդեմ ազատամիտ-

---

[1] *«Մեղու», 1857, թիվ 8, էջ 170:*

[2] *Ա տ ո մ. Ազգային սահմանադրությունը, Կ. Պոլիս, 1914, էջ 34:*

ների: Այս ամենով հանդերձ, պոլսահայ համայնքի ազատականացման գործընթացում հատկապես կարևոր էր մտավորականության դերը, նրա ներկայացուցիչներն էին, որ հեղինակեցին արևմտահայերի Ազգային սահմանադրությունը:

1859 թ. Բ. դուռը, ելնելով Փարիզի համաձայնագրի (մարտ 30, 1856 թ.) համապատասխան դրույթից, ոչ մահմեդական համայնքների (հույներ, հայեր, հրեաներ) գլխավորներին հանձնարարեց հանձնաժողովներ կազմել ազգային կանոնադրություններ մշակելու համար: Հայ համայնքի կանոնադրությունը կազմելու նպատակով ստեղծվեց երկու հանձնաժողով, մեկը՝ առաջադրված ազգի կողմից, իսկ մյուսը՝ նշանակված Բ. դռան կողմից: Սրանց ուժերով փոփոխված՝ 1857 թ. կանոնադրությունը վերջնականապես խմբագրված տեսքով 1859 թ. դեկտեմբերին քննության առնվեց Հոգևոր և Գերագույն ժողովների կողմից: Գեորգ պատրիարքը, որը հակասահմանադրական ամիրաների կամակատարն էր, հրաժարական տվեց: 1860 թ. մայիսի 24-ին, պատրիարք Սարգիս Գույումճյանի նախագահությամբ Ընդհանուր ժողովը վավերացրեց կանոնադրությունը:

Ազգային սահմանադրության հեղինակներն էին Ն. Պալյանը, Ն. Ռուսինյանը և Գր. Օտյանը. հատկապես նկատելի է առաջինի երախտիքն այս գործում, որը, Ն. Ռուսինյանի բացատրությամբ, «իր ձեռքը գծագրեց ազգային կանոնադրության հիմնական սկզբանց այն հոյակապ հատակագիծը, որ ետքերը խմբագրաց գրչին տակ ձևերու վայելուչ փոփոխություն կրած է»[3]:

Սահմանադրությունը հանդես էր գալիս ոչ միայն որպես Կ. Պոլսի, այլև Արևմտահայաստանի և ամբողջ Թուրքիայի հայ ազգաբնակչության կրթական, լուսավորական, մշակութային կյանքը իրավականորեն կարգավորող փաստաթուղթ: Ազգային Ընդհանուր ժողովը (երեսփոխանական ժողով) ընտրվում էր ամբողջ ազգի կողմից, իբրև օրենսդիր մարմին: Կազմվում էր Ազգային կենտրոնական վարչություն՝ իր քաղաքական (քաղաքացիական) և կրոնական ժողովներով: Պատրիարքը և այս երկու ժողովները ներկայացնում էին գործադիր իշխանությունը: Այս վերջինը իր իրավասություններն իրականացնում էր ազգային խորհուրդների (ուսումնական, տնտեսական, դատաստանական, վանքերի) և հոգաբարձությունների (ելևմտից, կտակաց, հիվանդանոցի) միջոցով: Պատրիարքը հանդես էր գալիս որպես Ազգային ժողովի նախագահ:

Սահմանադրական առաջին Ընդհանուր ժողովը գումարվեց 1860 թ. օգոստոսի 25-ին: Ժողովին մասնակցում էին 180 երեսփոխաններ, որոնցից ընտրված էին 120-ը, իսկ 60-ը անդամակիցներ էին (որ ենթադրվում էր սահմանադրության 9-րդ հոդվածով՝ մտավորականներ և պաշտոնյա հայեր):

Առ այսօր առկախ է մնում Ազգային սահմանադրության և եվրոպական սահմանադրությունների առնչությունների իրական պատկերը (ընտրական եղանակ, բուն սահմանադրական կառուցվածք, իշխանության տարբաժանում, կենտրոնացում և ապակենտրոնացում և այլն): Այս իմաստով չի գոհացնում Ա. Ալպոյաճյանի վերացական դիտողությունն այն մասին, թե Ազգային սահմա-

---

[3] *Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. Ազգային սահմանադրությունը, իր ծագումը և կիրառությունը.– «Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1910, էջ 331:*

նադրության միայն ընդհանուր քվեարկության սկզբունքն է փոխառված եվրոպական սահմանադրություններից, իսկ մնացած բոլոր դրույթները «քաղված են» պատրիարքական իրավասությունները սահմանող ֆերմաններից, ավանդական կարգուկանոնից և 1856 թ. փետրվարի 6-ի հաթթից[4]*: Մինչդեռ, դեռևս 1891 թ. բելգիացի իրավաբան Մ. Գ. Ռոլեն-Ժեկմենը նկատում էր, որ արևմտահայերի սահմանադրությունը կառուցված է ժամանակակից եվրոպական սահմանադրությունների ոճով, ինչպիսիք են նախաբանը, կենտրոնական ու գավառական վարչությունները, ժողովրդական ներկայացուցիչների տեղական՝ թաղերի և թեմական ժողովները, ընտրական իրավունքը, կրթությունը և անգամ սահմանադրության վերաքննությունը կարգավորող ազգային խորհուրդների գործունեության սահմանումը*[5]*: Սրանով հանդերձ, Ռոլեն-Ժեկմենը իրավացիորեն բացահայտում է այդ սահմանադրական սկզբունքների և ձևակերպումների մեջ և առանձին անհատների իրավունքները երաշխավորող իրավական որևէ ամրագրման իսպառ բացակայությունը: Սահմանադրության մեջ «ամեն ինչ կա, բացառությամբ այն կետի, որին կարող էր հենվել հայը, որպ եսգի թույլ չտար քրդին՝ խլելու նրա ոչխարը, բեյին՝ բռնաբարելու նրա աղջկան, և ամայացնելու նրա հողը, հարկահավաքին՝ նույն հարկը երկու կամ երեք անգամ պահանջելուն»*[6]*: Այլ կերպ, սահմանադրության մեջ անգիտացված էր ազգի և անհատի քաղաքական որևէ իրավունք և սա, անտարակույս, Ազգային սահմանադրության ամենամեծ թերությունն էր:*

Օսմանյան գավառներում փաշաների վարչական, ինչպես և տնտեսական ամենազորության մեջ առաջացած ճեղքերը հիվանդագին պետք է անդրադառնային սրանց դրամատնտեսական ու հարկային գործառույթները կարգավորող ամիրայության հասարակական ազդեցության ու հեղինակության վրա, որ ունեին նրանք ազգակիցների մեջ: Հայ համայնքում ընտրովի սահմանադրական վարչությունը իրավականորեն ամրապնդում էր այդ ազդեցության կորուստը: Սահմանադրությունից խորապես դժգոհ էր նաև հայ բարձրաստիճան եկեղեցականությունը, որը գավառներում և թաղերում զրկվել էր պատկառելի եկամուտներից կամ դրանք տնօրինելու հնարավորությունից: Եվ պատահական չէ, որ սահմանադրության դեմ ամբարած իր դժգոհությանը ամիրայական ու կրոնական պահպանողականությունը ելք տվեց ազգային ավանդույթների պաշտպանության կարգախոսով: 1860-ի սահմանադրության հռչակումը հակասահմանադրական «խավարյալների» և սրանց արբանյակների պարտությունն էր, բայց դեռևս ոչ վերջնական համակերպումը: Սահմանադրականների դեմ նրանք բացահայտ պայքարի ելան՝ Երուսաղեմի պատրիարքական ընտրության առիթն օգտագործելով: Կ. Պոլսի Ազգային վարչությունը մշակել էր Ս. Հակոբյանց վանքի կանոնադրությունը, ըստ որի, պատրիարք կարող էր ընտրվել և՛ այդ վանքի միաբանության ներսից և՛ դրսից՝ միաբանության մաս չկազմող Առաքելական եկեղե-

[4] *Նույն տեղում, էջ 391:*

[5] М. Г. Р о л е н - Ж е к м е н. Армения, армяне и трактаты.– В кн.: Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году. II-е изд. М., 1896, с. 18–19.

[6] *Նույն տեղում, էջ 19:*

ցու այլ ներկայացուցիչներից (այդ կանոնագիրը հաստատվել էր Ազգային ժողովի կողմից՝ 1861 թ. փետրվարի 17-ին): Ծայր առավ այսպես կոչված «ներսեն-դուրսեն» պայքարը՝ խավարյալների և լուսավորյալների միջև: Այն արագորեն գերաճեց սահմանադրության լինել-չլինելու շուրջ մղվող պայքարի: Երուսաղեմի պահպանողական հոգևորականությունը, Կ. Պոլսի իրենց հակասահմանադրական համախոհների աջակցությամբ, պնդում էին, որ պետք է պահպանել հին ավանդույթը և պատրիարք ընտրել միայն միաբանության ներսից: Սրանց միացած Սարգիս պատրիարքը խափանեց Երուսաղեմի պատրիարքի ընտրությունն ըստ Ազգային վարչության կանոնադրության, որին հետևեց 1861 թ. հուլիսի 21-ի Ընդհանուր ժողովի նիստում բախումը սահմանադրականների և նրանց հակառակորդների միջև, որ ուղեկցվեց ժողովրդի հուզումներով: Հուլիսի 26-ին պատրիարքը հրավիրեց համագումար ժողով, որը կայացրեց «խավարյալներին» բավարարող որոշումներ: Իր հերթին, օգոստոսի 5-ին սահմանադրականների գումարած Ընդհանուր ժողովը պատրիարքին մեղադրեց հակասահմանադրական ընթացքի մեջ, որ ծայր աստիճանի շիկացրեց կրքերը համայնքում: Իսկ երբ նույն պատրիարքի և «խավարյալների» նախաձեռնությամբ Կ. Պոլսի եկեղեցիներում կարդացվեց Մատթեոս կաթողիկոսի կոնդակը, որտեղ նա սատարում էր Երուսաղեմի պատրիարքի «ներսեն» ընտրության կողմնակիցներին, հավաքված ժողովրդի խմբերի միջև սկսվեցին կռիվ ու ծեծկռտուք[7]: Օգտվելով խառնակությունները կանխելու իր իրավունքից, ինչպես և այն փաստից, որ դեռևս չէր վավերացրել սահմանադրությունը, Բ. դուռը դադարեցրեց դրա գործողությունը: Պատրիարքը հրաժարական տվեց, Ազգային ժողովը և վարչությունը լուծարվեցին (1861 թ. հոկտեմբերի 17-ին): Կառավարությունը կազմեց ժամանակավոր վարչություն՝ խառն ժողով՝ պատրիարքական տեղապահի նախագահությամբ[8]: Դրանից հետո սահմանադրության վերաքննության համար կառավարությունը կազմեց հանձնաժողով (4 հոգևորական և 8 աշխարհական), որի մեջ ընդգրկվեցին Սերվիչենը, Գր. Աղաթոնը, Հ. Նորատունկյանը և այլք, հիմնականում այն անձինք, որոնք իրենց ներդրումն ունեին 1860 թ. սահմանադրության մշակման կամ խմբագրման մեջ: Այս հանձնաժողովն իր աշխատանքն ավարտեց 1862 թ. փետրվարին՝ խմբագրելով և փոփոխություններ մտցնելով սահմանադրության նոր տեքստում: Դրան հետևեց, դարձյալ Բ. դռան հրահանգով, Ընդհանուր ժողովի կողմից ստեղծված մի նոր հանձնաժողով, որին անդամակցում էին Մ. Աղաթոնը, Գր. Օտյանը, Ն. Ռուսինյանը, Ստ. Ասլանյանը, Հ. Սուրենյանը և ուրիշներ:

---

[7] *Կաթողիկոսը լուրջ հիմքեր ուներ անցնելու հակասահմանադրականների և «ներսեն»8 տեսակետի պաշտպանների կողմը: Նախ, սահմանադրությունը՝ իբրև աշխարհականացած հայ համայնքի կանոնադրություն, կաթողիկոսին զրկում էր պոլսահայ համայնքի վրա որևէ ազդեցություն ունենալու հնարավորությունից: Մյուս կողմից, Երուսաղեմի հայ պատրիարքության կանոնադրումը Ազգային վարչության կողմից՝ անջրպետում էր նաև Էջմիածնի և ս. Հակոբյանց վանքի ինքնուրույն, առանց որևէ վերահսկող մարմնի (որպիսին Ազգային վարչությունն էր) իրականացվելիք փոխհարաբերությունները: Եվ բնականաբար, կաթողիկոսը պետք է ընդդիմանար ոչ միայն սահմանադրությանը, այլև ս. Հակոբյանց վանքի սահմանադրմանը:*

[8] *Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. Ազգային սահմանադրությունը, էջ 394-397:*

Զույգ հանձնաժողովների համատեղ աշխատանքով պատրաստվեց սահմանադրության նոր տեքստ, որը ներկայացվեց կառավարության վավերացմանը (1862 թ. ապրիլ)[9]:

Սահմանադրության հաստատման համար պոլսահայության պայքարը, սակայն, դեռևս չէր ավարտվել: Սահմանադրության հակառակորդները դեռևս իրենց պարտված չէին համարում ո՛չ Կ. Պոլսում, ո՛չ էլ Երուսաղեմում: Բ. դուռն իր հերթին չէր շտապում վավերացնել նոր սահմանադրությունը, մինչև որ բանը հասավ նոր հուզումների: 1862 թ. օգոստոսի 1-ին Խառն ժողովին ներկայացավ սահմանադրականների պատվիրակությունը՝ սահմանադրության վավերացումը Բ. դռնից պահանջելու և դրա գործողությունը վերսկսելու պնդումներով: Ի պատասխան Խառն ժողովի ատենապետ Բարունակ Ֆերուհխանի (Քրթիկյան) հանդիմանությունների՝ հուզված ժողովուրդը ներխուժեց պատրիարքարան, ուժով դուրս հանեց այդ ժողովի անդամներին, ապա փակելով պատրիարքարանի դռները, ցրվեց: Ժողովրդի սահմանադրական և հակասահմանադրական խմբերի միջև փողոցային կռիվներն ու ընդհարումները շարունակվում էին դրանից հետո ևս, մինչև որ օգոստոսի 9-ին Բ. դուռը ոստիկանական զորաջոկատի միջոցով վերահաստատեց կարգուկանոնը և ժամանակավոր խառն ժողովի իրավասությունները[10]: Այսուհանդերձ, Բ. դռանը յոթ ամիս էր հարկավոր, հավանաբար, սահմանադրության նոր տեքստը հանգամանորեն ուսումնասիրելու և խմբագրական շտկումներ կատարելու համար, հատկապես սահմանադրության թուրքերեն տեքստում, որը բավականաչափ տարբերվում է հայերեն տեքստից: Վերջապես, 1863 թ. մարտի 17-ին կառավարությունը, ի գործածություն պատրիարքարանին, հանձնեց վերաքննված և իր հաստատած սահմանադրությունը[11]:

Հիրավի, 1860 և 1863 թթ. սահմանադրությունների միջև կան զգալի տարբերություններ, տարբերություններ կան նաև 1863 թ. սահմանադրության հայերեն և թուրքերեն տեքստերի միջև, որոնք ակնհայտորեն արտացոլում են ժամանակի պոլսահայ ազատամիտ մտավորականության և Բ. դռան մոտեցումների տարբերությունը հպատակ արևմտահայության կարգավիճակի վերաբերյալ: Նախ՝ անցնենք 1860 և 1863 թթ. սահմանադրությունների տարբերություններին:

1860 թ. սահմանադրությունը կազմված է 150 հոդվածից, 1863-ինը՝ 99: Վերջինս ավելի ամփոփ է և զերծ կանոնադրական ավելորդ մանրամասներից: Զույգ սահմանադրություններում էլ ոչ համամասնաբար է սահմանված Կ. Պոլսի և գավառահայ բնակչությունների ներկայացուցչությունը: 1860 թ. սահմանադրությամբ Կ. Պոլսի 200 հազարանոց համայնքը ընտրում է 220 երեսփոխան, որից 160-ը՝ Կ. Պոլսից, 60-ը՝ 2 միլիոնանոց գավառներից[12]: 1863 թ. սահմանադրությամբ՝ երեսփոխանների թիվը հասնում էր 140-ի, 100-ը՝ Կ. Պոլսից, 40-ը

---

[9] *Նույն տեղում, էջ 400-401:*

[10] *«Մեղու», 1862, թիվ 169, էջ 169-172:*

[11] *Ս ա ր ո ւ խ ա ն. Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 25:*

[12] *Ազգային սահմանադրություն հայոց, Կ. Պոլիս, 1860, էջ 10:*

գավառներից[13]: Երկու դեպքում էլ պահպանված է կայսրության մայրաքաղաքի հին առանձնաշնորհումը գավառների նկատմամբ: Արևմտահայաստանի բնակչության հույժ սահմանափակ ներկայացուցչությունը առիթ է տվել նկատելու, որ սահմանադրությունը գրված էր միայն պոլսահայերի համար: Ատոմը գրում էր, որ սահմանադրությունը խմբագրված ու սահմանված է Կ. Պոլսի և նրա արվարձանների համար, և որ առանձին «ունի միայն չորրորդ գլուխը՝ գավառի համար»[14]: Իսկապես, մինչև Մ. Խրիմյանի պատրիարքությունը և դրանից հետո էլ, 1870–1880-ական թվականներին շատ գավառներում սահմանադրությունը չէր գործում, ինչը բազմիցս անզորության է դատապարտել բուն Ազգային վարչության գործունեությունը՝ հրատապ դարձնելով սահմանադրության վերաքննության հիմնահարցը:

Հարկ է նկատել, որ, միանգամայն օսմանիզմի դրույթների ոգով, 1863-ի սահմանադրության մեջ, նախորդի համեմատությամբ, ավելի է նվազեցվել եկեղեցու, պատրիարքի ու հոգևորականության դերը Ազգային ժողովում: Այս իրողությունն արտացոլում էր միլեթներում (հայ, հույն, հրեա) եկեղեցու ազդեցությունը թուլացնելուն և ապա վերացնելուն ուղղված՝ օսմանիզմի գաղափարախոսության նպատակը, այն է՝ այդ հանրությունները հեռացնել իրենց դավանություններից և նախապատրաստել նրանց օսմանյան, մահմեդական զանգվածի մեջ ձուլելու գործը: Իսկապես, 1860 թ. սահմանադրությունը որքան էլ նեղ դարձներ պատրիարքի իրավասությունների (ինքնուրույնության) շրջանակը, այնուամենայնիվ, չէր սահմանափակվում սոսկ նրա պարտականությունները թվարկելով: Այստեղ որոշ իրավունքներ են ընձեռվում պատրիարքին, ինչպես՝ ազգային ժողովների կամ խորհուրդների լուծարման պահանջը, եթե նա «տեսնե, թե սույն ժողովները սահմանադրության հակառակ ընթացքի մեջ են (հոդվ. 18)[15]: Նույն կերպ, 1860 թ. սահմանադրությամբ պատրիարքը իրավունք ուներ վիճարկել ազգային ժողովների որոշումները և վերաքննել խնդիրը (հոդվ. 16), պաշտոնազրկելու կամ պաշտոնազրկումն արգելելու (եկեղեցիներին, վարժապետներին և այլն) առաջարկ անել (հոդվ. 17)[16]: 1863 թ. սահմանադրության մեջ վերացված են պատրիարքի այս իրավունքները, հաստատվում է միայն, որ պատրիարքը ազգային ժողովների նախագահն է և վարում է նրանց գործադիր իշխանությունը: Փոխարենը ընդգծվում է օսմանյան պետության գերակայությունը պատրիարքական պաշտոնի նկատմամբ, այն, որ նա «տերության հրամանաց գործադրության միջնորդն է» (հոդվ. 1)[17]: Այստեղ ավելացվել է պատրիարքական թեկնածուին ներկայացվող պետական պայմանը կամ կախվածությունը օսմանյան պետությունից, որ նա «միանգամայն տերության կատարյալ վստահությանն

---

[13] *Ազգային սահմանադրություն հայոց, Կ. Պոլիս-Սթամպոլ, 1863, էջ 39:*

[14] *Ատոմ. նշվ. աշխ., էջ 66:*

[15] *Ազգային սահմանադրություն, Կ. Պոլիս, 1860, էջ 13:*

[16] *Նույն տեղում:*

[17] *Ազգային սահմանադրություն, Կ. Պոլիս-Սթամպոլ, 1863, էջ 13:*

արժանավոր, և գոնե յուր հորմեն սկսյալ՝ օսմանյան հպատակ և երեսունուհինգ տարին լրացուցած ըլլա»[18]:

Ընդհանուր ժողովի գործունեության նկատմամբ օսմանյան պետության վերահսկողությունը փաստորեն ոչնչով չսահմանափակված բնույթ է կրում 1863 թ. սահմանադրության 61 և 62-րդ հոդվածների ուժով, որով Ընդհանուր ժողովի յուրաքանչյուր գումարման համար անհրաժեշտ էր նախ իրազեկել Բ. դռանը և ստանալ «անոր հաճությունը»[19]: Ճիշտ է, այս սանկցիան վերաբերում է «արտաքո կարգի նիստերուն», բայց Ընդհանուր ժողովի իրավասությունների թվարկման մեջ ոչ մի տարբերակում չկա, թե որոնք են այդ ժողովի սովորական բնույթի և որոնք՝ արտաքո կարգի նիստերը: Դրանով Բ. դուռն իրեն իրավունք էր վերապահում ուզած պահի արգելել Ընդհանուր ժողովի որևէ նիստ կամ միջամտել դրան: Սարուխանն այս առթիվ իրավացիորեն նկատում է, որ հետագայում այդ վերապահումը Աբդուլ Համիդի ձեռքին զենք պետք է դառնար Ընդհանուր ժողովի նույնիսկ սովորական նիստերն արգելելու համար[20]:

1863 թ. սահմանադրությունից դուրս են մնացել նախորդ տեքստի՝ Ազգային վարչության կազմության մասին այն հոդվածները, որոնք վերաբերում են վարչության երեսփոխանական բնույթին, գավառացի հայերի հետ գավառական վարչության փոխադարձ պարտականություններին ու իրավունքներին, ինչպես և ամբողջ ազգի, Էջմիածնի Մայր Աթոռի հետ ունեցած հարաբերություններին[21]: 1863 թ. սահմանադրության մեջ նորություն է Երուսաղեմի պատրիարքի կարգավիճակի, Ազգային վարչության հետ նրա փոխհարաբերությունների և այլնի կանոնակարգումը (հոդվ. 17-23): Ամրագրվել է Երուսաղեմի պատրիարքի «ներսեն» ընտրակարգը, որ մի հայտնի չափով զիջում էր կրոնական պահպանողականությանը: Սահմանափակվում էին նաև Ազգային ժողովի իրավասությունները ս. Հակոբյանց վանքի նկատմամբ:

Անտարակույս, 1863 թ. սահմանադրությունն իր ազգային արժեքով ու ազատականության չափերով զիջում է 1860 թ. սահմանադրության տեքստին: 1863 թ. սահմանադրության մեջ, ինչպես տեսանք, առավել ընդգծված է նրա կանոնադրական բնույթը, ընդարձակված է օսմանյան տերությունից ազգի կախման ու ենթարկվածության իրավական հարթությունը: 1863 թ. սահմանադրությունը շատ ավելի նվազ սնուցման հիմքեր է տալիս ազգային ինքնորոշման տրամադրություններին, քան 1860 թ. սահմանադրությունը: Կարելի է կարծել, որ 1863 թ. սահմանադրության ազգային ու քաղաքական բովանդակության այս անվիճելի անշքացումը նկատի ուներ Մ. Նալբանդյանը, երբ շեշտում էր դրա «թլպատված» և մասնակիորեն «խեղացած» բնույթը՝ նախորդ տարբերակի համեմատությամբ[22]:

---

[18] *Նույն տեղում:*

[19] *Նույն տեղում, էջ 40-41:*

[20] *Ս ա ր ո ւ խ ա ն. նշվ. աշխ., էջ 251-252:*

[21] *Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն. նշվ. աշխ., էջ 406:*

[22] *Տե՛ս Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն. Հրապարակախոսական երկեր, Երևան, 1979, էջ 427:*

1863 թ. վավերացված սահմանադրությունը գործեց մինչև 1866 թ., երբ անհաշտելի տարաձայնություններ առաջացան ազգային ժողովների, ինչպես և սրանց ու պատրիարքի միջև: Վերջինս հրաժարական տվեց, որից հետո խնդրին միջամուխ եղավ Բ. դուռը և դադարեցրեց սահմանադրության գործողությունը: Կառավարությունն այդ պատճառաբանեց Ազգային ժողովի՝ սահմանադրական ընթացքից շեղումներով, հատկապես Ընդհանուր ժողովի նիստեր գումարելը՝ առանց քվորումի ապահովման (ըստ հոդվ. 59-ի, ժողովը կարող էր գումարվել նրա անդամների կեսից ավելիի՝ 71 երեսփոխանի առկայության դեպքում): Գործնականում, իրոք, դժվար էր այդ քանակն ապահովելը, մասնավորապես գավառից, իսկ բացակա երեսփոխաններից քվեն խնդրում էին անգամ նամակով: Միաժամանակ, Բ. դուռը պահանջեց սահմանադրության վերաքննությունը, որն այդպես էլ չկատարվեց: 1868 թ. մարտին, Գր. Օտյանի և Սերվիչենի ջանքերով հաջողվեց վերագործադրել սահմանադրությունը՝ առանց վերաքննության: Այս պայմաններում, 1868 թ. օգոստոսի 28-ին պատրիարք ընտրվեց Մ. Խրիմյանը:

Սահմանադրական շրջանում քննարկված կարևորագույն հարցերը բոլորն էլ անլույծ են մնացել, և եթե խոսք կարող է լինել այդ հարցերի նշանակալիության մասին, ապա միայն հասարակական կարծիքն ու միտքը դրանց վրա բևեռելու իմաստով: Այդպիսիք են ազգային տուրքի հարցը, վերաբերմունքը հայ եկեղեցական կանոնադրության՝ «Պոլոժենիեի» նկատմամբ, սահմանադրության վերաքննության, գավառական հարստահարությունների խնդիրները: Սրանցից վերաքննության խնդիրը պատրիարք Մ. Խրիմյանը փորձում էր իրականացնել գավառներում սահմանադրությունը գործադրելու ուղղությամբ: Նրա պատրիարքության ժամանակ Ազգային վարչությունը կազմեց «Սահմանադրական հրահանգ գավառաց համար» փաստաթուղթը, որտեղ որոշակիություն էր մտցվում գավառական ընդհանուր ժողովների, գավառական վարչության, թաղական խորհուրդների կազմության ձևերի մեջ, ինչպես և տեղական օսմանյան իշխանությունների հետ առաջնորդների և գավառական ժողովների հարաբերությունների ասպարեզում: Այն ամրապնդելու նպատակով Մ. Խրիմյանը առաջարկում էր Ազգային վարչությունը տրոհել երկու մասի՝ Կ. Պոլսի և գավառական գործերով զբաղվող մարմինների: Առաջարկը մերժվեց պոլսահայ վերնախավը և էֆենդիական դասը ներկայացնող Քաղաքական ժողովի և սահմանադրության վերաքննիչ հանձնաժողովի կողմից: Այս, ինչպես և սահմանադրության վերաքննության հարցը, որի շուրջ անպտուղ վիճաբանություններն այդպես էլ որևէ արդյունք չտվեցին, այն պատճառներն էին, որ հասցրեցին Մ. Խրիմյանի հրաժարականին[23]:

Խրիմյանի ժամանակից սկսած, Ազգային ժողովը զբաղվել է գավառական հարստահարությունների խնդրով: Բ. դռանը տրամադրվեց տեղեկագիր (1872 թ. ապրիլի 11-ին), որտեղ փաստական պատկառելի նյութով ցուցադրվում էին հարստահարությունների և կեղեքումների մռայլ առօրյան ու մթնոլորտն ամ-

[23] *Է. Կ ո ս տ ա ն դ յ ա ն. Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2000, էջ 162-163:*

բողջ Արևմտյան Հայաստանում: Առաջին անգամ էր, որ Կ. Պոլսի Ազգային ժողովը օգտվում էր բողոքելու սահմանադրական իրավունքից և առաջին անգամ՝ սահմանադրական շրջանում, երբ Բ. դուռն իր անգործունակությամբ ցույց տվեց, որ այդ իրավունքը, ինչպես և հայերի ամեն մի անհատական ու ազգային իրավունք, ոչնչով երաշխավորված չէ պետության կողմից:

Գավառական հարստահարությունների խնդիրը առավել լայն չափերով և հետևողականությամբ արծարծվեց Ներսես Վարժապետյանի պատրիարքության ժամանակ: Դրա առաջին մասն ընդգրկում էր Մ. Խրիմյանի պատրիարքության օրոք կազմված՝ վերոհիշյալ տեղեկագիրը, իսկ երկրորդ մասը՝ 1872–1876 թթ. ժամանակաշրջանի հարստահարությունների նկարագիրը[24]*: Հայտնի է, որ այս տեղեկագիրը ևս որևէ գործնական նշանակություն չունեցավ և մոռացության մատնվեց 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին նախորդող իրադարձությունների հորձանուտում: Սահմանադրության բովանդակագրկության փաստն էր արձանագրում Ռաֆֆին, երբ նկատում էր, որ «Կ. Պոլսի ազգային սահմանադրությունն ուրիշ ոչինչ չի եղել, բայց միայն մանկական խաղալիք, որ խորամանկ դայակն տալիս է երեխայի ձեռքում, որ նրանով զբաղվի, չարություն չգործե»*[25]*: Դրանից առաջ սահմանադրության քաղաքական ու իրավական հնարավորությունների նկատմամբ իր բացասական կարծիքն էր հայտնում Ստ. Ոսկանյանը, որը «սահմանավոր» (իմա սահմանադրական) «պոլսեցիներին» հեգնում էր, որ նրանք այսուհետև ստիպված կլինեն «սահմանադրությունը հմայեկի պես կուրծքերնուն վրա դրոշմել ու փառավորիլ հացկերույթի երթալու ատեն»*[26]*:*

Սահմանադրական շրջանի կարևոր հարցերից մեկը, որի բազմաթիվ քննարկումները նույնպես ոչ մի արդյունքի չէին հասցնելու, բարենորոգումների խնդիրն էր: Այն սկիզբ է առնում Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ Բ. դռանը դիմելու՝ Քաղաքական ժողովի կողմից Ազգային ժողովի քննարկմանը ներկայացրած առաջարկով (1876 թ. նոյեմբերի 29): Այն պահն էր, երբ միջազգային քաղաքականության օրակարգ էր մտել Բալկանյան սլավոնների ազգային ինքնորոշման պահանջը այս կամ այն չափով բավարարելու խնդիրը: Վերոհիշյալ առաջարկի քննարկումները Ազգային ժողովի սրահից այդպես էլ դուրս չեկան: Օսմանյան սահմանադրության վերահաս հռչակման հանգամանքը ավելորդ էր դարձնում խնդրի «շահեկանությունը և այժմեականությունը»[27]*: Խոսքն այս դեպքում վերաբերում էր Օսմանյան Թուրքիայի ընդհանուր բարենորոգումների իրավական երաշխիքին: 1877–1878 թթ. պատերազմից հետո, միջազգային և օսմանյան բարենորոգչական խաղերին տրվելով և իշխանությունների իրազեկության պայմաններում Ազգային ժողովը վերստին անդրադարձավ բարենորոգումների խնդրին՝ 1879 թ,. մայիսի 18-ի,*

---

[24] *Տեղեկագիր Ազգային ժողովո, Կ. Պոլիս, 1876, էջ 203-238:*

[25] *Ռ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1991, էջ 452:*

[26] *«Արևմուտք», Փարիզ, 1864, թիվ 1 , էջ 2:*

[27] *Լ. Չ ո ր մ ի ս յ ա ն. Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, 1850-1878, հ. Ա, Բեյրութ, 1972, էջ 273:*

հունիսի 29-ի և հուլիսի 6-ի նիստերում[28]: Դրանք նույնպես ոչ մի նշանակություն չունեցան բարենորոգումների խնդրի նկատմամբ Բ. դռան կամ տերությունների վաղանցուկ հետաքրքրությունը հետևողական սկզբունքի վերածելու, հարստահարվող հայության վիճակը բարելավելու համար:

Հիրավի, իր բնույթով և կիրառական նշանակությամբ նշված փաստաթուղթը պարզապես կանոնադրություն է, որ կարգավորում է հպատակ ազգի մշակութային, կրոնական ու հասարակական գործերը: Բայց և չի կարելի անգիտանալ այն, որ սահմանադրությունը իրավականորեն ձևակերպում էր ժողովրդի և նրա առաջադեմ մտավորականության պայքարի արդյունքները՝ հայ հանրության վարչությունը ազատականացնելու, նրա մտավոր ու մշակութային զարգացումը ապահովելու ասպարեզում: Սահմանադրության շնորհիվ հայ բնակչությունը ճեղքում էր կրոնական համայնքի դավանական անձուկ սահմանները և իր վարչությունը կազմակերպում քաղաքակիրթ հանրության իրավական նորմերի շրջանակներում: Սահմանադրությունը ազգային և հոգևոր-մշակութային փոխհարաբերությունների նոր փուլ էր նշանակելու Կ. Պոլսի և Արևմտահայաստանի հայ բնակչության համար: Դրա շնորհիվ Կ. Պոլսում և արևմտահայ գավառներում ստեղծվեցին ազգային բազմաթիվ դպրոցներ, մշակութային, կրթական ու հասարակական կազմակերպություններ, ժամանակակից լրատվություն տարածող մամուլ: Այդ սահմանադրության շրջանակներում իսկ եկեղեցին կարողացավ պահպանել իր ազգապահպան դերը՝ ամրագրելով իր անխզելի կապերը Էջմիածնի Մայր Աթոռի հետ: Հայ հանրության վարչության մեջ հոգևորականության դերի թուլացումը և աշխարհիկ հարաբերությունների զարգացումը, որի միջոցով օսմանիզմի գաղափարախոսները փորձում էին խարխլել հայերի ազգային ինքնությունը՝ օսմանյան ընդհանրության մեջ նրա ձուլումը նախապատրաստելու նպատակով, հուսախաբ արեց այդ նույն գաղափարախոսներին: Իր ամբողջ կանոնադրական բնույթով հանդերձ սահմանադրությունը «առաջադիմության միքալ էր հին ամիրայական ռեժիմի համեմատությամբ»[29]: Միաժամանակ, այն սնուցում էր ազգային ինքնորոշման տրամադրություններ, և սա այն անսպասելի իրողությունն էր, որ պետք է ծառանար օսմանյան բարենորոգիչների առջև:

Հայտնի է, որ օսմանյան քաղաքագետները մասնակի բարեկարգումների գաղափարին մշտապես հակադրել են ընդհանուր բարեկարգումների վերացական սկզբունքը՝ ճգնելով Թուրքիան պատվարել եվրոպական կամ ռուսական միջամտություններից (հօգուտ այս կամ այն կրոնական հանրության կամ ազգի): Արևմտահայերի Ազգային սահմանադրությունը, որ հարկադրված ընդունել և վավերացրել էր Բ. դուռը, իր քաղաքական ողջ բովանդակազրկությամբ հանդերձ, իրավականորեն մասնակի բարեկարգման բնույթ ուներ (այդ կարգի կանոնադրություններ տրվեցին միայն հպատակ փոքրամասնություններին՝ հույներին, հայերին և հրեաներին): Պարտադրված այս իրողությունը հաշվի առնե-

---

[28] *Տե՛ս Տեղեկագիր Ազգային ժողովո, Կ. Պոլիս, 1879, էջ 49-52, 125,431:*

[29] *Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Երևան, 1955, էջ 384:*

լով, օսմանյան պետությունը, փոխարենը, մշտապես ձգտել է ամլացնել այդ կանոնադրությունների գործունեությունն ու կիրառումը (կարելի է հիշել նաև 1880-ական թվականների հույների այսպես կոչված «առանձնաշնորհումների» վրա Բ. դռան հարձակումները): Բ. դուռն անում էր ամեն ինչ կամ գրեթե ամեն ինչ՝ վիժեցնելու արևմտահայերի սահմանադրական կառույցների գործունեությունը, երեսփոխանական ժողովում ստեղծելով իր կամքին հլու էֆենդիական դասի (պետական ծառայության մեջ գտնվող հայ պաշտոնյաներ) խմբակցություններ, Ազգային ժողովը վերածելով սնամեջ ու անպտուղ խոսարանի և այլն: Այսուհանդերձ, սահմանադրությունը հիմնականում գործել է 1869–1891 թթ., ապա ընդհատումներով՝ 1891–1896 թթ., որից հետո դադարել է՝ հիմնականում գործելով մինչև 1908 թ.: Երիտթուրքական սահմանադրության տարիներին և ընդհուպ մինչև հայերի ցեղասպանությունը այն գործել է իբրև զուտ ազգային կանոնադրություն՝ կառավարության առավել շեշտված վերահսկողության պայմաններում և ինչպես միշտ, զուրկ որևէ քաղաքական արժեքից: Հայերի ցեղասպանության տարիներին՝ 1915–1916 թթ. երիտթուրքերը վերացրեցին Ազգային սահմանադրությունը: Երիտթուրքական կառավարությունը (Թալեաթի նախաձեռնությամբ) միացրեց Սսի, Աղթամարի կաթողիկոսությունները, ինչպես և Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունները՝ այս գործընթացն ավարտելով 1916 թ., երբ Սսի կաթողիկոսական աթոռը փոխադրվեց Երուսաղեմ: Առաջին աշխարհամարտում թուրքերի կրած պարտությունից հետո օսմանյան նոր կառավարությունը վերացրեց վերոհիշյալ վերաձևումները և վերահաստատեց Ազգային սահմանադրությունը 1918 թ. նոյեմբերի 20-ի հրովարտակով[30]: Լոզանի կոնֆերանսից (1922 թ., նոյեմբերի 20–1923 թ., հուլիսի 24) հետո Ազգային սահմանադրությունը, ինչպես և Թուրքիայի բոլոր հպատակ փոքրամասնությունների կանոնադրությունները, վերացվեցին:

Ազգային սահմանադրությունն իր հիմնական դրույթներով և համապատասխան փոփոխություններով 1920-ական թվականների վերջերից ընկած էր Կիլիկիայի կաթողիկոսության Կանոնադրության հիմքում, որ գործադրվում էր նրա մերձավորարևելյան թեմերում: Ամերիկայի հայ եկեղեցու նոր սահմանադրության հիմքում ևս, որ ընդունվել է 1928 թ., որպես հիմնական սկզբունքներից մեկը, ընկած էին արևմտահայերի Ազգային սահմանադրության դրույթները[31]:

Ասվեց, որ Ազգային սահմանադրության մեջ անգիտացվել էր Արևմտահայաստանն ու նրա իրավական կացությունը, բուն իսկ Արևմտահայաստանում էլ մի քանի բացառություններով, այն գրեթե չի գործել: Սակայն այդ անգիտացումը, պատմական ընթացքի մի պարադոքսով, դարձավ այն զորեղ խթաններից մեկը, որ Արևմտահայաստանի հարցը առաջնակարգ դարձրեց ամբողջ ազգի համար: Հայ հասարակական միտքը ուշադրությունը բևեռեց սահմանադրության մեջ այդ բացակա օբյեկտի, ասել կուզի՝ Արևմտահայաստանի իրավական կացության վրա: Մ. Խրիմյանի, ապա Ն. Վարժապետյանի պատրիարքությունների ժա-

---

[30] *Ազգային սահմանադրություն Հայոց, Անթիլիաս, 1968, էջ 45-46:*

[31] *Ազգային սահմանադրություն Ամերիկայի հայոց (առանց հրատ. տեղի), 1929, էջ 2:*

մանակ Բ. դուռ հղված տեղեկագրերը այդպես էլ ընթացք չստացան վերջինիս կողմից, սակայն անչափ կարևոր նշանակություն ունեցան անտերունչ հայրենիքին ի տես ազգային ինքնագիտակցության խորացման համար: Ազգային սահմանադրությամբ հայերին ընձեռված բողոքելու իրավունքը *հող էր նախապատրաստում ազգի ազատ ապրելու՝ ազգային ինքնորոշման իրավունքի ուղղությամբ պայքարելու համար: Այս մտայնության գործնական դրսևորումները, կարծում ենք, մի հայտնի չափով իրենց զգալ տվեցին արդեն 1862 թ. Զեյթունի նշանավոր ապստամբության, ինչպես և առհասարակ XIX դ. 2-րդ կեսի հայ ազատագրական շարժման գաղափարա-գործնական հանգրվաններում: Հենց սրանում էլ կարելի է տեսնել արևմտահայերի սահմանադրության ազգային արժեքն ու նշանակությունը:*

ЕЩЕ РАЗ О НАЦИОНАЛЬНОЙ КОНСТИТУЦИИ ЗАПАДНЫХ АРМЯН

АЛЬБЕРТ ХАРАТЯН

Р е з ю м е

Национальная конституция западных армян, утвержденная Высокой Портой в 1863 г., являлась, по сути, положением, регулирующим вопросы в сфере образования, культуры и церкви. Данным правовым актом были ликвидированы привилегии богатого амирайского сословия. Не имея политического содержания, конституция не гарантировала индивидуальных и национальных прав армян, обеспечивая их лишь избирательным правом, и способствовала распространению идеи национального самоопределения.

ONCE AGAIN ON NATIONAL CONSTITUTION OF WESTERN ARMENIANS

ALBERT KHARATYAN

S u m m a r y

The national constitution of the Western Armenians (approved by Porta in 1863) was, in essence, a charter regulating educational, religious and cultural relations of the Armenians in Constantinople. At the same time this legal act abolished the privileges of the rich Armenian layer in the Armenian community, and it provided suffrage for the people, though only formally, i.e. wider opportunities for the development of national establishments and culture. This constitution, devoid of any political content, didn’t lay down any individual and national rights for the Armenians, however, it promoted the increase in mood of the national self-determination.